

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ՎԻՐՈՒՍԱԶԵՐԾ
ԲՈՒՅՍԵՐԻ ԱՏԱՑՈՒՄԸ ՄԵՐԻՍՏԵՄԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ

ՀՀ Գյուղ. նախարարության Երկրագործության և բույսերի պաշտպանության
գիտական կենտրոն

Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլաբուծության զարգացման համար
կարևոր նշանակություն ունի առողջացված տնկանյութի տեղական արտադրությունը:

Հայտնի է, որ կարտոֆիլի վիրուսազերծ բույսերի ստացման արդյունավետ
եղանակներից է գազաթնային մերիսթեմայից փորձանոթային բույսերի վերական-
գնումը: Հանրապետությունում շրջանացված և հեռանկարային Իմպալա, Մասկիա,
Աուսոնիա, Քենեբեկ, Նևսկի սորտերի վիրուսազերծ փորձանոթային բույսերի ստացման
լավագույն պայմանների ընտրության նպատակով փորձարկվել են մերիսթեմաների
աճեցման համար օգտագործվող տարբեր սննդամիջավայրեր և արագ վերա-
կանգնմանը նպաստող լուսային և ջերմաստիճանային պայմաններ: Ուսումնասիրվել է
պալարների ծլեցման տարբեր պայմանների ազդեցությունը ծիլերի վիրուսազերծ
հատվածի մեծության վրա:

Կարտոֆիլի վիրուսների առկայությունը ստուգվել է իմունաֆերմենտային
անալիզատորով օգտագործելով (X, S, M, F) պոլիվիրուսային սիճուկը:

Յուրաքանչյուր սորտի համար ընտրվել է արհեստական սննդամիջավայրի
այնպիսի կազմ և այնպիսի պայմաններ, որոնք ապահովում են 60-70 %
արդյունավետությամբ վիրուսազերծ բույսերի ստացումը:

L.Alexanyan

THE RECEIPT OF SOME VIRUSFREE POTATO VARIETIES BY MERISTEM
METHOD

Summary

Regeneration of in vitro plants from apical meristem is one of the efficient ways
of obtaining virusfree plants. Favorable conditions for obtaining Impala, Marphona,
Saskia, Ausonia, Kennebek, Nevsky virusfree varieties are being observed and chosen.